


ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն շաբաթ:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր ըստ 2 կոպէկի:

ԲՈՒՂԱՆԳԱՎՈՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ժողովուրդը պէտք է
կարգայ. Հայունեաց Բարեգործական ընկերու-
թիւն. Նամակ վաղարշապատից. Նամակ Բա-
ղուց. Նամակ Աղստաֆայից. Ներքին լուրեր.—
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բաղկանեան պետութիւն-
ների դաշնակցութիւնը. Աղստաֆայի կաթողիկոսի
համապարհօրդութիւնը. Տեղեկութիւններ թիւրքաց
Հայաստանից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒ-
ՐԵՐ.—ՀԵՌԱՊԵՏՈՒԹԻՒՆ.—ԲՈՐՍԱ.—ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ.
—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎՈՐԴՈՒ ՊԵՏԻ ԿԱՐԳԱՅ

Մտաւոր շարժումը ժողովրդի բոլոր խաւերի
մէջ թափանցել է կարող, եթէ ընթերցանութիւ-
նը, իրեն առաւել կենսական մի միջոց, դպրութիւն
կոչուող միայն այն շրջաններէ մէջ, որոնց ուղ-
ղակի կողմէն է առաջնորդել ժողովրդի աշխար-
հայեցողութեանը և դարձեալ զորքին ինք-
նակաշարժութիւնը պէտք է մուտք գործի և ժողո-
վրդի մէջ. նա պէտք է տարբարայ և մեծամաս-
նութեան մէջ, թափանցելով մարդկային կենսա-
նոյն իսկ ամենահեռուէր անկիւնները, որպէս զի
այդ մոլոր անկիւնների մէջ կարողանայ աճել մի
որ և է ընկերական, հասարակական միտք, մի որ
և է նոր, բարձր, կրթիչ դադափար: Իսկ դրա
համար հարկաւոր է, որ ինքը ժողովուրդը կար-
գայ: Այժմ ընդհանրապէս, ժողովուրդը չէ կար-
գում. նրա մէջ չը կայ ընթերցանութիւն: Այդ է
պատճառը որ ժողովրդական կենսաճը մնում է
նոյն անշարժութեան, նոյն մեռելութեան մէջ,
նա մնում է դուրի որ և ինչ մտաւոր շարժողութիւ-
նից, որ և է կազդուող մտաւոր կերակուրից, թէև
փոքրամասնութեան մէջ, առաջնորդող շրջան-
ներում նկատուում են ամեն տեսակ նորութիւնների
նշանները: Անկախաձայն այդ է պատճառը, որ թէև
վարդապետներ մեր մէջ գոյութիւն ունեն և հա-
սարակական գործունէութիւն, և դպրոց, և լրա-
դրութիւն, և թատրոն, բայց այդ բոլորը՝ ընդ-
հանրապէս վերցնելով շատ քիչ է լայնացնում
իր աղիւստիւնը շրջանը, և չէ կարողանում իր
օգտակար ներդրութիւնը տարածել ժողովրդի
կենսաճի խորքերի մէջ: Եւ եթէ մեր հասարակա-
կան—մտաւոր կենսաճը շատ անգամ տխուր պատ-
կեր է ներկայացնում, դրա զլաւագուր պատճառը
այն է, որ ընթերցանութիւնը ոչինչ մուտք չունի
բուն ժողովրդական կենսաճի մէջ, որը շարունա-
կում է մնալ մեռած և թմրած դրութեան մէջ:

Մեր ժողովրդի մէջ վարդապետութիւն է ներքին
մտաւոր կենսաճը. նրա մէջ մինչև այժմ էլ
չէ նկատուում ոչ մի առանձին ոգևորութիւն,
և ոչ էլ մի առանձին ներքին ոյժ և կամք:
Բայց այդ դրութեան մէջ մնալ ոչ պէտք է և ոչ
էլ կարելի է: Նոր պահանջների համար նոր դե-
րութիւն պէտք է ստեղծել: Իսկ դրա համար
հարկաւոր է որ ինքը ժողովուրդը սկսի հասկա-
նալ իր դրութիւնը, դրա համար հարկաւոր է որ
ժողովրդի փակված կենսաճը բացվի քաղաքակր-
թական հոսանքի առաջ, և սկսի ունենալ իր սե-
փական մտաւոր կենսաճը: Այդ նպատակին հասնե-
լու համար՝ ուրիշ ֆակտորներին հետ միասին ըն-
թերցանութիւնն էլ մի դուրի միջոց է: Կարելի է
ասել դրանապէս, որ նոյն իսկ ժողովրդական
դպրոցի զլաւագուր նպատակն էլ հէնց այն է, որ
նա դարձնուի մտաւոր շարժողութիւն մէջ,
միջոց պէտք է տայ նրան ունենալու մտաւոր
կենսաճը, շարունակելու լայնացնել իր հոգեկան
աշխարհը, և անդադար ձեռք բերելու. այն բոլոր-
ը, ինչ որ անհրաժեշտ է, փոքր ի շատէ գիտակ-
ցաբար վերաբերելու դէպի իր հոգ և զեպի իր
շրջակայքը աշխարհը:

Ժողովրդական դպրոցը պէտք է աշխատի նպատ-
ակը ժողովրդի մէջ ընթերցանութիւն և աշխ-
տարածելու, որի միջոցով ժողովուրդը կարո-

ղանար միշտ ունենալ մտաւոր կենսաճը: Այդ
պատճառով ընթերցանութիւնը ժողովրդի համար
մի շատ կարեւոր նշանակութիւն է ստանում:
Վերջապէս, երկրագործը, արհեստավորը չը պէտք
է կարգայ միայն այն ժամանակ, երբ պ ա ռ ա պ է,
երբ գործ չունի: Ընթերցանութիւնը չը պէտք է
լինի միայն մի միջոց, որով ժողովրդին պատկա-
նող մարդը կարողանայ անցկացնել իր պարտա-
կաւորը ժամերը, երբ նա սովորաբար կամ բամ-
բասում է, կամ կուռում է և կամ արբեցողու-
թեամբ է պարտաւոր: Այդ, ճշմարիտ է, որ
պարտաւոր ժամերը անցկացնելով այնպիսի օգու-
ւէտ դրամագործի, ինչպիսին որ ընթերցանու-
թիւնն է, ժողովուրդը աղատ կը մնայ մի շարք
անբարոյականացնող սովորութիւններից.—բայց
բացի դրանից, ընթերցանութիւնը պէտք է լինի
մի այնպիսի միջոց, որը ուղղակի նպատակէր ժո-
ղովրդի, ամբողջ անային բարեկեցութեանը, տըն-
տեսագիտական հմտութիւնների շատանալուն,
ընկերական ոգու դարձանալուն, նրա դադափա-
րական-մտաւոր աշխարհայեցողութեան կանո-
նաւորելուն և աճելուն...

Ժողովրդի մէջ պէտք է մտնել դէժ տարրական
հասկացողութիւն ա ո ո ղ ջ ա պ ա հ ու թ և ա ն
մասին. պէտք է նրան միջոց ապա տ ն տ ե ս ո բ է ն
ապրելու համար. նա պէտք է որոշ հասկացողու-
թիւն ունենայ իր ընտանեկան, հասարակական
պարտաւորութիւնների մասին. նա պէտք է ըմ-
բռնէ իր պարտքը դէպի իր նոր սերունդը. նրան
պէտք է տեղեկութիւններ հաղորդել աշխատան-
քի, փոխադարձ օգնութեան, և մարդկային իրա-
ւունքների մասին. նա պէտք է զգայ իր իրա-
ւունքները.—այդ բոլորի համար ընթերցանութիւ-
նը մի ուղիղ և դուրի միջոց է: Ամեն մի ժողո-
վուրդ պէտք է ծանօթութիւն ունենայ իրանից
փոքր ինչ հեռու դանդաղ երկրներին, աղիւստի
մասին, նա պէտք է կարողանայ հասկանալ աւե-
լի կանոնաւոր, և ուրիշ աւելի լաւ կազմա-
կերպված կենսաճի ինչպիսի լինելը.—այդ ծա-
նօթութիւնը կարող է տալ ժողովրդին ըն-
թերցանութիւնը: Բայց այդ դեռ բաւական
չէ. բայց մի շարք և բազմաթիւ գործնական
տեղեկութիւններից որ պէտք է տայ ընթեր-
ցանութիւնը, նա ունի և մի ուրիշ շատ մեծ
նպատակ: Բայց, ինչպէս ամեն մի անհատ,
այնպէս էլ ամեն մի ժողովուրդ, պէտք է ունե-
նայ իր յատուկ հասկացողութիւնը չ ա ռ ի և
բ ա ռ ի ի մասին, մե ծ ի և ա ռ ժ ա ն ա ո ռ ի
մասին.—մի խօսքով նա պէտք է ունենայ իր
համար, իրան յարմար իրեաներ, մարդկանց և
գործերի կատարելատիպը.—որոնց նա պէտք է
ձգտի մտնելու, նմանելու...

Ոչ մի ժողովուրդ չը պէտք է ապրի առանց
հասարակական և անհատական իրեաների: Եւ
ընթերցանութիւնը այն զլաւագուր միջոցն է, որով
ժողովուրդը կարող կը լինի պատկերացնել իր
համար զանազան ի ղ է ա լ Ն ե ռ, մեծութեան և
բարձրութեան, անձնութեան և հատապարկա-
մութեան կատարելատիպը: Ներկայումս մեր ժո-
ղովրդի մարդը իր քիչից հեռու չէ տեսնում. նա
կատարելութիւն է անտեսական ամեն մի անաշո-
ղութեան առաջ. նա չէ իմանում ոչ իր իրաւուն-
քը վախճաւորի առաջ և ոչ էլ իր պարտաւորու-
թիւնը իր հասարակութեան առաջ. մարդկային
արժանաւորութեան կատարելատիպը նրա հա-
մար՝ ծով պահող ճիւղաւորն է, մեծութեան տի-
պարը նրա համար ներկայացնում է միայն նա,
ով որ ուրիշներին ճշնչուլու ոյժ ունի. նա այսօր
ապրել է Աստուծու. չորսով և վաղաք իր կենսաճը
բ ա ղ ղ ի ղ կախված է համարում...

Այդպիսի աշխարհայեցողութեան փոխարէն նոր
և կանոնաւոր աշխարհայեցողութիւն ստեղծե-
լու համար ժողովուրդը պէտք է սկսի ու-
նենալ իր մտաւոր կենսաճը, պէտք է սկսի ունե-
նալ գիտակցութիւն. մտաւոր կենսաճ և գիտակ-
ցութիւն ունենալու համար ժողովուրդը պէտք
է կարգայ:

ՀԱՅՈՒՆԵԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Թիֆլիսի Հայունեաց Բարեգործական ընկերու-
թեան վարչութիւնը ուղարկել է մի ընկերու-
թեան երկնային հաշիւը, սկսած 1886 թ. մարտի
1-ից մինչև 1887 թ. մարտի 1-ը, անդամակցա-
կան ցուցակը և մարտի 15-ի կայացած ընդհա-
նուր ժողովի մի քանի մանրամասնութիւնները,
որոնցից երևում է հետևեալը: 1886 թ. մարտի
1-ից մինչև 1887 թ. մարտի 1-ը երկնային հաշ-
ից երևում է, որ ընկերութիւնը մուտք ունեցել
է 6,556 ռ. 20 կոպէկ, ունեցել է առձեռն գրամ
6,761 ռ. 18 կոպ. և անձեռնովսկի գումար ար-
ժեւորներով 4,726 ռ. 40 կ. համագումարն է
18,043 ռ. 78 կոպ. վերջիշեալ ժամանակամիջո-
ցում ծ ա ի ղ եղել է, Ս. Նշան եկեղեցու դպրո-
ցի ղեկավարը, Կրա 6,013 ռ. 10 կ. Գալոցի
պահպանութեան համար 885 ռ. 70 կ. (որից 442
96 կոպէկ վարձարեւոյնի և վարձուների ու-
ձիկ է), զանազան ուսումնարանների և ուսանող-
ների տրված և ջրօրհնաց տոնին չբաւար ընտա-
նիկներին բաժանված է 469 ռ. 45 կոպէկ: Աւե-
լացնելով այդ բոլորի վրա մի քանի երկրորդական
մանր ծախքեր՝ երևում է, որ ընկերութեան ծախ-
քի գումարն է 7,526 ռ. 18 կոպ. Գուրս դադու
ծախքը ընկերութեան ունեցածից, երևում է, որ
ընկերութիւնը ներկայ թվականի մարտի 1-ին ու-
նեցել է 10,517 ռ. 60 կոպէկ: Ընկերութեան
վարչութիւնը որոշել է առաջիկայ սեպտեմբերից
բանալ դպրոցում երրորդ բաժանման մի դուղըն-
թաց դաստառուն, ուր աշակերտութիւնների հետ ա-
ռանձնապէս էլ պարտաւոր ձեռագործով. բայց ո-
րովհետև դպրոցի այժման շինութեան մէջ չը
կայ յարմարաւոր սենեակ, ուստի վարչութիւնը
մարտի 15-ի ընդհանուր ժողովում խնդրեց նա-
խահաշուից դուրս նշանակել 500 ռուբլի, որպէս
զի այդ գումարով եկեղեցու գաւթի մէջ գտնվող
սենեակը նորոգվի և յարմարացվի դասատան
համար, ու գնվի հարկաւոր կահ-կարասիքը:

Մարտի 15-ի ժողովում կարգադրեցաւ վարչու-
թեան կազմած նախահաշիւը 1887 թ. մարտի
1-ից մինչև 1888 թ. մարտի 1-ը: Նա-
խահաշուի մուտք ապաստում է. անդամներից՝
1,100 ռուբլի, պարահանդէսից, կոնցերտներից և
այլն՝ 1,500 ռուբլի, նուիրատուութիւններից՝ 100
ռ. ընկերութեան գումարից տոկոս՝ 400 ռուբլի:
Նախահաշուի ծախս որոշված է.—ս. Նշան եկե-
ղեցու դպրոցի պահպանութեան համար 2,282 ռ.
զանազան ուսումնարաններին միանուագ օժան-
դակութիւն և չբաւար անհանց և ընտանիքների
բաժանելու համար՝ 500 ռ., դիւանական և ուրիշ
մանր ծախքեր՝ 70 ռուբլի: Ընդհանուր ժողովը
հաստատեց վարչութեան կազմած այդ նախահա-
շիւը, այլ և 500 ռուբլու վարկը, վերջիշեալ դուղ-
ընթաց դասատան համար պատրաստութիւններ
ստեղծելու նպատակով:

Ընկերութեան վարչութիւնը իր կողմից ընտրել
է ատենապետութիւն՝ տիկին Նադեժդա Ալիսանեա-
նին, փոխ-ատենապետութիւն՝ Իլիանուհի Կատարի-
նէ Բաբայանին և զանազան տիկին վարկա-
նէ Բաբայանին: Վարչութեան միւս անդամներն
են՝ տիկին Կատարինէ Եսայանուհի, տիկին Սո-
ֆիա Բաբայանին, Սոֆիա Պարսեան և Կատարինէ
Սարգսին: Վարչութիւնը իր շնորհակալութիւնն
յայտնում հետեւեալ անձանց, Իլիանուհի Սարգսին
Արդութեանին, որ նուիրել է 25 ռուբլի. Կոյս
Հովհաննէ Թադևոսեանին, որ խոստացել է իւրա-
քանչիւր տարի 20 ռուբլի տալ՝ աշակերտութիւն-
ի համար հարկաւոր ժամանակ դեղորայք գնելու
համար. պ. Եսայի Վիկտորեանին, որ իր մասնա-
ւոր թատրոնում տուած ներկայացման 225 ռուբ-
լի արդիւնքը ուղարկել է ընկերութեան. Երեմի
Քանաւայ Երեմեանին, օր. Վարդաւ. Միրոնա-
նեանին և պ. Նիկողայոս Գրիգորեանին՝ որոնք
ձրիաբար ուսուցանում են ս. Նշան եկեղեցու
դպրոցում. առաջինը՝ երգեցողութիւն, երկրորդը՝
ուսուցող լիւր և երրորդը՝ զմարտիկներ:

Հայունեաց ընկերութեան վարչութիւնը ընդու-
նի է Զրկինեանց եկեղեցու ուսումնարանի նախ-

կին վարչութիւնից 1,987 ռ. և ստանալու է զա-
նազան պետքներ և կահ-կարասիք, այն պայ-
մանով, որ այդ գումարի տոկոսներով ս. Նշան ե-
կեղեցու դպրոցի մէջ սովորեն 15 աշակերտութիւն:
Հայունեաց Բարեգործական ընկերութիւնը ունի
166 անդամութիւն, որոնցից 25 մշտական անդա-
մութիւններ են:

ՆԱՍՏԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

Մարտի 17-ին

Այս ձմեռը այնպիսի էր, որի նմանը, ինչպէս
ծեր մարդիկ պատմում են, դեռ տեսնված չէ բացի
կորստաբեր 1880 թ. ձմեռից: Այսօր մարտի 17 է,
բայց դաշտի վրայի ձիւնը չէ հալվում արեւ տա-
րութեան տակ. զարնան ցանքի ժամանակ հա-
սել է և դեռ երկիրը ծածկված է ձիւնի սպիտակ
սաւանով, որը մի անդալան երեւոյթ կարելի է
համարել զոնէ Էջմիածնի գաւառի համար: Վա-
ղարշապատի շրջակայքում թէև անասունների մի
մասը ձմեռվայ սկզբում վարակիչ հիւանդութեան
պատճառով ոչնչացան, բայց դարձեալ այժմ
դարմանի 1 մանկիւնաց խաղալը (30 պուղ)
ծախվում է 10 ռ. նոյնպէս խոտի հարկը խուր-
ձը 10 ռ. բաւական չէ որ գինը այդքան թան-
գանում է, անասունների պաշարն էլ գրեթէ բո-
ւորովին սպառված է.—ցորենի գինը նոյնպէս
բարձրացել է՝ խաղալը 25 ռուբլի է այժմ. գու-
ցէ և էլի պիտի թանգանա: Թաղ մեր երկրի պ.
պ. վաճառականները իրանց ժողովրդի դառն
բերանի պտուղը չնչին գներով (8—9 ռուբլ.)
աւանդ և արտահանելով ժողովրդի միջոց, Բա-
թումում ամենաթանկ գնով ծախեն և քրտապի
Վաղարշապատի մէջ գոյութիւն ունեն և հա-
սարակական գործունէութիւն, և դպրոց, և լրա-
դրութիւն, և թատրոն, բայց այդ բոլորը՝ ընդ-
հանրապէս վերցնելով շատ քիչ է լայնացնում
իր աղիւստիւնը շրջանը, և չէ կարողանում իր
օգտակար ներդրութիւնը տարածել ժողովրդի
կենսաճի խորքերի մէջ: Եւ եթէ մեր հասարակա-
կան—մտաւոր կենսաճը շատ անգամ տխուր պատ-
կեր է ներկայացնում, դրա զլաւագուր պատճառը
այն է, որ ընթերցանութիւնը ոչինչ մուտք չունի
բուն ժողովրդական կենսաճի մէջ, որը շարունա-
կում է մնալ մեռած և թմրած դրութեան մէջ:

Մեր ժողովրդի մէջ վարդապետութիւն է ներքին
մտաւոր կենսաճը. նրա մէջ մինչև այժմ էլ
չէ նկատուում ոչ մի առանձին ոգևորութիւն,
և ոչ էլ մի առանձին ներքին ոյժ և կամք:
Բայց այդ դրութեան մէջ մնալ ոչ պէտք է և ոչ
էլ կարելի է: Նոր պահանջների համար նոր դե-
րութիւն պէտք է ստեղծել: Իսկ դրա համար
հարկաւոր է որ ինքը ժողովուրդը սկսի հասկա-
նալ իր դրութիւնը, դրա համար հարկաւոր է որ
ժողովրդի փակված կենսաճը բացվի քաղաքակր-
թական հոսանքի առաջ, և սկսի ունենալ իր սե-
փական մտաւոր կենսաճը: Այդ նպատակին հասնե-
լու համար՝ ուրիշ ֆակտորներին հետ միասին ըն-
թերցանութիւնն էլ մի դուրի միջոց է: Կարելի է
ասել դրանապէս, որ նոյն իսկ ժողովրդական
դպրոցի զլաւագուր նպատակն էլ հէնց այն է, որ
նա դարձնուի մտաւոր շարժողութիւն մէջ,
միջոց պէտք է տայ նրան ունենալու մտաւոր
կենսաճը, շարունակելու լայնացնել իր հոգեկան
աշխարհը, և անդադար ձեռք բերելու. այն բոլոր-
ը, ինչ որ անհրաժեշտ է, փոքր ի շատէ գիտակ-
ցաբար վերաբերելու դէպի իր հոգ և զեպի իր
շրջակայքը աշխարհը:

Այս տարի բարեկենդանին վաղարշապատի թատերասիրաց խումբը պատրաստվեց յօդուտ զարդանքներ անհրաժեշտները տալու, որոնք սակայն չափովիցանա:

Անցեալ յոճավարի 10-ին վախճանվեցաւ վաղարշապատցի պ. փ. Նաւասարդեան, թատրոնական խմբի առաջին դերասանն էր իրավարը. հանդուցեալ Նաւասարդեանց քիչ անձնական ծառայութիւնն չը դնեց վաղարշապատի հասարակական բազմութիւն շինութեան դրոշմն իր հաղարարական պաշտօնով:

Եթէ վաղարշապատում, ուրախալի մի բան կայ, այն է, որ վեհափառի հրամանով այս տարի երկուսն զարդանքներ բացված են: 600 տուն ունեցող վաղարշապատի հասարակութիւնը տըւել է զարդանքներն մօտ 140 աշակերտ և աշակերտուհիք, մինչդեռ կարող էր առ 300 տղայ և աղջիկներ: Այդ կարելի է վերադրել և մասամբ նրան, որ զարդանքներ շինութիւնը բոլորովին անհամապատասխան է զարդը լինելու և շատ փոքր է: Եթէ հանգամանքները ներքին, երկուսն զարդանքների հոգաբարձութիւնը մտադիր է դիմել հասարակութեան օժանդակութեան տղայացի զբոսը շինութեան համար մի դրամաշուրջ կազմելու: Տեսնենք ինչ աշխատութիւն կունենայ այդ մտադրութիւնը: Առաւորը բոլորովին ընկած է ժողովուրդը ունեցած կօպէկներով հաղիւ կարողանում է իր ընտանիքի և անասունների անհրաժեշտ պէտքերը հոգալ:

Այսօր առաջին անգամ սկսեց անձրև գալ:

Մ. Ե.

ՆԱՄԱՆ ԲԱՅՈՒՅՑ

Մարտի 23-ին

Մարտի 22-ին դուռնայի դահլիճում կայացաւ Կարա-Մուրադայի երրորդ կնոջ Երան, որը տեղեկութեան 81/2 ժամից մինչև 10 1/2: Տարաբաղ-դարար դահլիճի կէտն էր միայն իր հասարակութեամբ: Համարը բաղկացած էր երկու բաժիններից: Երեկոյն սկսվեցաւ Անա հրեշտակ ուկրաինացու ղրին հետեւեցին մնացած 15 երգերը: Երգերը բաժանած էին սօս և երգերի, իվարտեաների և խօթական երգեցողութեան: Այս երգերը, ինչպէս և անցեալ անգամներում՝ Շահալման, Սուքիա-սիան և վարդիկեան էին, վերջիններիս մասին մի քանի նկատողութիւններ կային և «Մշակի» մէջ: Այս անգամ երկուսի ձայնն էլ կտրված էր և շատ վատ տպաւորութիւն թողեց հասարակութեան վրա: Ինչ վերաբերում է առաջինին՝ Շահալմանին, նա այս անգամ սովորների մէջ պատկը տարաւ. շատ ուժեղ և բարձր բարիտոն է, իր կատարած երկու կտորների մէջ աջող էր, բառական լաւ տպաւորութիւն է թողնում առհասարակ: «Մշակի վեր կաց» երգը նա առաջին անգամն էր երգում, նոր երգ է:

Կլարտեանում աչքի էր ընկնում Արուստան, որը ուժեղ բան է խմբերգանքը կատարվեցաւ վերին աստիճանի աջողութեամբ, խումբը բնով վրա լուրան կատարելապէս ազատ էր զգում և երգում: Խմբերգանքը այս անգամ դերասանացում էր մինչև այժմ եղածներից: Ով Տէր Աստուածը՝ այնքան աշխատեցանք կատարվեցաւ, որ եթէ հանգուցեալ թաշնան ներկայ լինէր, անպատճառ կը բացականէր: Էս ուղեցեղ էի դուրս բերել այն, ինչ կենդանացրեց Կարա-Մուրադայի խումբը: Մեր բաղմաշխատ Կարա-Մուրադ, բարձրացնելով մեր բաղմաշխոյնները, ցոյց է տալիս թէ մենք ևս դուրի չենք մոռցնալից, որը տարաբաղդարար մինչև հիմա դեռ խանձարուրի մէջ, անկիրթ և անուշադիր էր թողնում:

Միւս երգերից շատ աջող էին «Ղուկ», «Մեր նախնիք», «Թող ինչ քամին», «Կար մօղա» և այլն:

Գալ շարաթ խումբը պիտի եկեղեցում երգէ պատարագի արարողութիւնը. յոտով ենք, որ դա էլ աջող կանցնի, աչքի առաջ ունենալով անցեալ տարեկայ երգածները: Միւս համարը, ինչպէս տեղեկանում ենք, կը լինի Զատիկի երրորդ օրը:

Սօս

ՆԱՄԱՆ ԱՂԱՍԱՅՈՒՅՑ

Մարտի 25-ին

Մարտի 24-ին չորեքը այս կողմերում շուտով կը սկսվին: Նա, որին չէ պատահել անցնել այս տեղերով ամառային ամիսներում, նա որը երբեք բաղդ չէ ունեցել այս տեղերում կիզիւ արեգակի:

Նաւասարդեանի տակ միլիոնաւոր մոծակների երաժշտութիւնը դրնէ մի անգամ լսելու, նա չէ կարող անկասկած երեսկայութիւն ունենալ այն անտանելի դրութեան մասին, որին դիմանում են մարդիկ բնակելով այս դժոխային վայրերում: օղը վնասակար և անտանելի. ջուրը վատ և անառողջարար... ամայի և տխուր տեղեր... Ահա հանապազիւ իրա կամաց կամաց շարժվում է ֆուրգոնների մի շարք. ծանր հառաչելով ցած է իջնում մինի վրայից ֆուրգոնային. տանում է ձեռքը իր արեգի սևացած հակառակ, որում է դեմ պէս թափվող քրտինքը, յանձնում է ձեռք պատկանող բեռը և քշում է իր վաստակած ձիաները դէպի «դժբեր» թէ ինքը մի քիչ հանգստանալու և թէ իր վաստակած ձիաներին մի փոքր հանդիսա տալու: Չը նայելով իր յորձանու-թեան, չը նայելով խեղդող տապին, նա ձեռք է առնում վիզոնները ջուր տանելու իր ձիաների համար: «ՇՈՒՆ», պատասխանում են նրան—իրաւունք չը կայ այլ ևս այստեղից ջուր տանելու: Ինչու, կը հարցնի անկասկած ընկերացողը: Ինչու էլ չը դիմում ինչու. բայց այդքանը կայ, որ մեր երկաթուղու ընկերութիւնը բարեհա-ձեղ է նորերումս կարգադրութիւն անել թիֆ-լիսից, որ այն ջուրը, որ մի խողովակով գա-լիս էր այստեղ մի քանի վերաբերի, և որից օգտվում էին բոլոր այստեղի ապրողները, վա-րել և չը թողնել հասարակ մանկանացուներին նրան մօտենալ: Փակեցին: Տեղացիք դէմ ևս մի կերպ կարող էին «հօլա» դաւ. բայց ֆուրգոն-չիք: Օրական մօտաւորապէս 30, 40 ֆուրգոն է մտնում Ալլախաֆա, շատ անգամ նոյն իսկ 100 և օրական 100—200 ձիաների հարկաւորում է ջուր տալ: Կամայ ակամայ այդ մարդիկ ունեցին իրանց ջուրը վեր առնել երկու թէ երեք վերաբի վրա գտնվող ինչ որ մի արտի մէջ եղող փոքրիկ առուից, բայց ահա այսօր էլ թուրք կառուածա-տէրը զանգատում է որ իր արտը փչացնում են ֆուրգոնչիք, անցնելով այդ տեղերով, և բան-տարիւղ տալով մի քանի տանեակ ձիաներ, ֆուրգոնչիքներից վնաս է պահանջում: Դա ար-դէն չափից դուրս է: Հապա ինչ անին այդ դերիկի, հարցնում ենք մենք. ինչո՞ւ ձեռք ծարաւից: Կոտորեմ իրանց ձիաներին, թէ դաշարին միան-գամայն այլ ևս ֆուրգոնչիութիւն անելուց, թընդով ձեռ տուած կօպէկներե փոա Բօյս օյն ժամանակ ինչ անենք մենք հարկը հաղար պուզերով այստեղ ստացվող ապրանքների հետ. պուզին մի բուբի տանք, թէ դենք ունենելու ու այնպէս տանենք տեղ հասցնենք:

Չենք խօսում երբ ապրանքները ուշացնում էք, փչացնում էք, տեղի թէ անտեղի նեղացնում էք ժողովրդին. չենք խօսում երբ օրը մի նոր և մէկը մի կից աւելի դարձող կարգադրութիւններ էք ա-նում, փոխանակ դէպի լուր մի ամենամանչան փո-խփոխեան. ով մեր երկաթուղիների մեծ ընկե-րութիւն, բայց ինչ որ ընտելիւնը ինքը ձեռ տա-լիս է ձրի, բայց ինչ որ դուք ժողովրդին տալով ինքներդ էլ ոչինչ չէք կորցնում, ինչ է նշանա-կում մերժել այդ նրան փառք Աստուծոյ, այն դեռը, որտեղից այդ ջուրը գալիս է հօ չը պի-տի ցամաքէր, երբ ֆուրգոնչիք կամ տեղացիք ջուր տանէին այդտեղից: Ոչ, ջուրն էլ ցանկա-նում են փողով ծախել ժողովրդի վրա... և այդ անում է այն ընկերութիւնը, որը տարեկան նոյն իսկ այդ ժողովրդից միլիոններ է ստանում: Հաց ենք ուղում, մեղ օձ են առաջարկում Դա—կրկը-նում են, արդէն չափից դուրս է:

Ա. Ապրէսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

ՆՈՐ-ԲԱՅԱՋԵՏԻՑ մեղ հաղորդում են մարտի 21-ից հետեւեալ: Վերջապէս եղանակը սկսեց մեղանում էլ մեղմանալ. այժմ կատարելալ դարուն է և ձիւնը հալելով՝ սարերից ահադին առուներով ջրի հոսանքները գնան են թափվում: Հանա-պարհները սաստիկ ցիւտու են և այդ ցիւտութիւն մինչև ծնկները խրվելով խեղճ գիւղացիները ու տարերիկ շալակով կրում են մի գիւղից միւս գիւղը իրանց անասունների պաշարը, խոտ կամ դարման (յարդ): Այժմ խոտի և դարմանի գները շատ բարձր են, այն ինչ աշանք (սկզբներէն), խոտի ապրը արժէր 2 բուբլի, իսկ դարմանի չա-թանքը 80 կօպէկ: Բայց այժմ առաջինն արժէ 7 բուբլի, իսկ երկրորդը 5 բուբլի: Չքաւոր գիւղա-ցիւտից շատերը ծախեցին իրանց ունեցած-չու-նեցածը, կամ մեծ տոկոսով փող առան վաշխա-

սուներից, որպէս զի կարողանան սովամահ լինե-լուց աղատել իրանց անասուններին:

«Մշակի» անցեալ համարում հաղորդելով սօ-ւիտ էրից բժշկող Մարտիրոս Հախնաւա-րեանցի ընկալութեան տեղը թիֆլիսում, մոռա-ցանք հաղորդել ընկերացիներին փողոցի անունը: Ուստի այժմ նորից հաղորդում ենք Հախնաւա-րեանցի հասցէն, որ հետեւեալն է. Թիֆլիս, Չուրու-վի, Գօնչարնայա փողոց, տուն № 44, Թաթնո-վի, կամ Բուսերեյն. Тифлиси, Чугурети, Го-чарная улица, дом № 44, Татосова.

Անցեալ 1886 թ.ի «Մշակի» բաժանորդներից 100 հոգու չափ դեռ մինչև այժմ չեն վճարել խմբագրութեանը իրանց բաժանորդագինը, ու-րեմն մենք դեռ հ ա ղ ա Ր ր ու ը լ ու չափ ունենք ստանալու մեր անցեալ տարեկայ բաժանորդներից: Ուստի խնդրում ենք յիշեալ անձինքներին ուղար-կել «Մշակի» խմբագրութեանը իրանց վրա մնա-ցած ապաւիկները:

ՆԵՐՔԻՆ ԵՆՑ մեր թղթակիցը հաղորդում է մեղ հետեւեալ տեղեկութիւնները: Հացը և բամբակը զգալի կերպով թանկացան այժմ և օրից օր աւե-լի են թանկանում: Իսկ գիւղացիներից շատերը ուտելու հաց չունեն, ցորենի նոր դուրս եկած ժամանակ շատերը նրանցից իրանց կարիքները լրացնելու համար ծախում էին ցորենի պուզը 40 կօպէկով, իսկ այժմ պուզը 80—90 կօպէկով հաղիւ են ձեռք բերում, այն էլ իրանց պիտանա-ցու կենդանիներ վաճառելով: Այժմ Երևանի հրա-պարակի վրա ցորենը ծախվում է՝ խալվարը 28 բուբլիով և աւելի, խալը 15 բուբլի պուզը, բամ-բակը 8 բ. 40 կօպէկից մինչև 8 բ. 50 կօպէկ: Չուրի 100 հատը արժէ 1 բ. 50 կ: Երկուր ցորե-նից յետոյ հաղիւ մի երկու օր արևի երեսը տե-ւանք և ձիւնը բոլորովին հալեց: Այժմ էլ հէնց ամպամած է, բայց յոյս կայ որ ձիւնի փոխարէն անձրև տեղայ:

ՍԱՐԿԱՄԵՆԻՑ, որ թիւրքաց Հայաստանի սահ-մանից 30 վերստ հեռավորութեամբ է գտնվում, մեղ գրում են մարտի 23-ից, որ այդտեղ սարերը, ձորերն ու դաշտերը դեռ ևս պատած են խոր ձիւնով:

Մեղ գրում են ՆՈՒՄԻ քաղաքից հետեւեալը: «Մեր ուսուցչական խումբը մտադիր էր բարե-կենդան շարաթին մի ներկայացումն տալ, բայց յայտնի չէ ինչ պատճառով այդ ներկայա-ցումն չաջողվեցաւ: Այժմ շատ յարմար կը լինէր, եթէ մեր ուսուցչական խումբը պատրաստվէր և մի ներկայացումն տար Զատիկ տօնիկին: Զոյս ունենք որ մեր ուսումնարանը լաւ արդիւնք կը ստանար այդ ներկայացումից, ևս առաւել որ մեղմանում երկար ժամանակ է որ ոչ մի թատրո-նական ներկայացում եղած չէ:

Ստացանք պ. Ղազարոս Աղա յանցից նրա նոր վէպիկը «Արեգնայան, կամ կախարարական աշխարհ» վերնադրով: Դա հայոց հին ժողովրդա-կան զրոյցներից առած մի վէպիկ է երևում, որ զը-ված է թիւթի կերպով. նա մեծ յախշապետութեամբ կարգացվում է ոչ թէ միայն փոքր, բայց և հա-սակ առած ընթերցողներից: Գրքոյըը տպված է թիֆլիսում, Զովհանէս Մարտիրոսեանի տպարա-նում, ներկայ 1887 թ.ին և ծախվում է 40 կօ-պէկով:

«Մշակի» նախընթաց համարներից մինում մենք յայտնել էինք, որ թիֆլիսի հայ հասարակութիւնը մտադրութիւն ունի արժանաւոր կերպով տօնել մեզ յօբելեանը: Այժմ մենք հաստատ աղբւրհնե-րից իմացանք, որ այդ յօբելեանի առիթով թիֆ-լիսի հայ թատերասէներին խումբը ծալքի 26-ին քաղաքային թատրոնում ներկայացնելու է Զմը-կեանի թատրամանաճ «Գերդաստան» կօմիդիան, չորս արարուածով, հեղ. Վրիլովի (Մէքքանդովի):

Կուր գետի ջուրը ամսիս 29-ից սկսած փոքր առ-փոքր պակասում է: Կուրի յորդանալը բաւական վեհաներ է տուել դեռի երկու ավաւո գտն-վող շինութիւններին, մասնաւոր Աւշալայի մօ-տերում՝ Թիֆլիսի ջրանցքի շինութիւնը, որի վնասը հարկւ հազարի է հասնում:

Պետերբուրգի լրագրների խօսքերին նայելով, այս ամառ կովկաս պէտք է զայ ֆրանսիացի հնագէտ Լուի Ժամէն այստեղ հնագիտական հե-տազօտութիւններ անելու համար:

Պ. Սարգսի վերջին զատախօսութիւնը, որը տեղի ունեցաւ Գիւղատնտեսական ընկերութեան դահլիճում, նուիրված էր ֆիլոսոֆիայի տարածվե-լուն Ռուսաստանում: Ֆիլոսոֆիան թէև արդէն վաղուց մտաք է գործել Ռուսաստան, բայց ա-ռանձին վնաս խաղողի մշակութեանը դեռ չէ տուել: Խօսելով այդ մասին, թէ որքան անտեսա-կան մեծ օգուտ ունի խաղողի մշակութիւնը Ղրի-մում, Բնասարաբխայում և Անդրկովկասում, դասա-խօսը այն միտքը յայտնեց, որ եթէ մեր գիւնե-դործները և խաղող մշակողները ուշադրութեամբ կուէին ֆիլոսոֆիայի դէմ, գործ դնելով կառա-վարութեան հրատարակած միջոցները, այն ժա-մանակ անկասկած ֆիլոսոֆիան չէր կարող աճել, և մեր երկրի գիւնեդործութիւնը կունենար փառա-ւոր ապագայ:

Ամսիս 28-ին, Գիւղատնտեսական ընկերու-թեան դահլիճում կայացաւ Տեխնիկական և Գիւ-ղատնտեսական ընկերութիւնների խառն ժողովը, որի մէջ պ. ֆօն-Վելչենսով կարգաց մի գեկու-ցում այն մասին, թէ «Կովկասի ջրերը զիտառ-րապէս ինչ պէտքերի համար պէտք է ծառայեն»: Զեկուցանողը այն միտքը յայտնեց, որ Կովկասի ջրերը պէտք գլխաւորապէս ոռոգման (իր-րիգացիայի) նշանակութիւն ունենան, և ժողովը հա-մաձայնեց այդ մտքի հետ, երկրորդական նշանա-կութիւն տալով մեր ջրերին իբրեւ նաւադնացա-կան միջոցին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՒԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴԱՇՆԱԿԵՐԹԻՒՆ

Բաղկանեան պետութիւնների դաշնակցութեան միտքը նոյնքան հին է, որքան հին է Արեւելեան հայոցը: Առաջին անգամ չէ որ հանդէս է գալիս Բաղկանեան պետութիւնների դաշնակցութիւն կազմելու խնդիրը: Ամեն անգամ, երբ Բաղկանի վրա տեղի են ունենում զանազան քաղաքական շարժումներ, երբ երևան է գալիս եւրօպական մի քանի պետութիւնների քաղաքականութեան լըն-դիրը—միշտ այդ քաղաքական շարժումները յարուցանում են Բաղկանեան պետութիւնների դաշնակցութեան խնդիրը: Իբրեւ մի միջոց, որով կարելի է քաղաքական մի հաստատ դրութիւն ստեղծել Եւրօպայի հարաւ-արեւելեան անկիւնում: Այդ դաշնակցութեան միտքը այժմ արժանիւմ է, աւելի քան երբ և իցէ, քանի որ քաղաքական զորքերը չեն կորցնում իրանց կնճառտ կերպա-րանքը, թէև անցնում են ամիսներ և տարիներ: Վերջին հեռավորները լուրեր էին բերում, որ Լուսինացոյց Կար թագաւորը այդ խնդրի մասին յատուկ բանակցութիւններ է սկսել թէ Բերլի-նում և թէ Վիեննայում: Գերմանիան, Բուսաւանդ Աւստրիան այդ հարցի մէջ կենսական շահեր և սպասելիքներ ունեն: Միւս կողմից Բաղկանեան պետութիւնների մէջ ներքին բարեկամութեան զղացմունքը աճում է, և այդ պետութիւնների մէջ ստեղծական-քաղաքական շահերի միութեան դադարաւոր աւելի ու աւելի խոր արմատ է գը-ցում: Բաղկանեան թերակղզու վրա: Սերբիայի թա-գաւոր Միլանի և բոյղարական կառավարութեան մէջ բարեկամութիւն է հաստատված: Բուսինիան կատարելապէս պատրաստ է հետեւել Գերմա-նիայի և Աւստրիայի ցուցումներին Բաղկանեան դաշնակցութեան վերաբերութեամբ. իսկ Գերմա-նիայի և Աւստրիայի հայեացքները այդ դաշնակ-ցութեան մասին վաղուց յայտնի իրողութիւններ են: Դաշնակցութեան մտքին համակրանքով է վե-րաբերվում և Զուստուտանը, որը երբեք չէ մոռա-նում իր պատմական-քաղաքական հաշիւները թիւրքիայի հետ, և որը արդէն բանակցութիւններ էլ է սկսել Բաղկանի միւս պետութիւնների հետ: Նոյն մտքի և դադարաւոր մասին, ինչպէս շատ անգամ հեռագիրը տեղեկութիւն է բերել, բուռն պրօպագանդա է լինում և Մակեդոնիայի մէջ: Թէ ինչ հետեւեալ կունենայ Բաղկանեան դաշնակ-ցութեան դադարաւոր իրադրութեանը եւրօպական ընդհանուր քաղաքականութեան համար,—այդ ա-պագան կարող է պարզել. առ. այժմ այդքանը ակնհայտ է, որ այդ նպատակի համար աշխատում

Քի: «Новое Время» հաղորդում է, որ ֆինանսները մինիստրը վճռեց, արտասահմանյան անցագրերի նոր տուրքը հաստատելիս, վերացնել բոլոր արտոնությունները, որոնցով, այժմյան կանոնների հիման վրա, օգտվում են զինվորների և համարների մեջ ցուցակագրված անձինք, Ռուսաստանում բնակություն հաստատած օտարահայտականները և տասն տարեկան հասակին չը հասած երեխաները. այդ արտոնությունները պահպանվում են միմյանց այն կալուածատերերի համար, որոնք արտասահմանում նոյնպես կալուածներ ունեն, — և այդ էլ ոչ առելի քան երեք ամսով:

Պետերբուրգ, 29 մարտի: Արտասահմանյան անցագրերի տուրքի մասին «НОВОСТИ» լրագիրը հաղորդում է, որ բացի կալուածատերերից, արտոնություններով կօգտվեն պաշտոնակատար անձինք, որոնք դնում են արտասահման մշտական պաշտոնավարություն համար, ոչ հաստատարակ օտարահայտականները, վերադարձված սպաները, տասն տարեկանից փոքր երեխաները, եթե դրանք դնում են իրանց ծնողների հետ, այն անձինք, որոնք դնում են՝ Նրուսաղէմ և Ալեքս, նոյնպես և ուստացնացություն համար ու առևտրական գործերով դէպի ասիական պետությունները, այլ և մի քանի ուրիշները: Եթե վախճանվեցաւ յայտնի արտաքին վաճառիչ վաճառիչի Սամոյլով:

ԲՕՄԲԵ, 30 մարտի: Ալիստրա-խան, բրիտանական նուրբակը կարող է մեջ, վերադարձաւ կարող Շարանտուրից, որտեղ տեսակցութիւն ունեցաւ փոխարքային հետ: Անդրիական ինժեներ Պէյնի դէպի կարող գնալ նրանով է բացատրվում, որ Պէյն ընդունեց էմիրի առաջարկությունը՝ կառուցանել արհեստանոցներ և կարգի դնել անհրաժեշտ միջոցներ, — երկրի հանքերը և քարածուխի հանքերը Ալեքսիստանում մշակելու համար Պէյնին ուղեկցում են բազմաթիւ ճարտարարուեստ մեքենայատներ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՕՐԱՍ

Մարտի 27-ին

Ռուսաց 1 լուրի 1 օնցունի վրա արժէ	21 1/4	պէնս.
— — — — —	180 1/4	պֆ.
— — — — —	223 1/2	սան.
Ուկր. — — — — —	9	30 կ.
Մարտային կուպոններ — — — — —	179	75 >
Արծաթ — — — — —	1	42 >

Բօրային դիվիզիաներ — — — — —	41 1/2	60 >
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի	99	75 >
— — — — —	2-րդ — — — — —	99 > 25 >
— — — — —	3-րդ — — — — —	99 > — >
— — — — —	4-րդ — — — — —	99 > — >
— — — — —	5-րդ — — — — —	99 > — >
— — — — —	6-րդ — — — — —	— > — >
Արևելեան 5% փոխառութ. 1-ին շրջ.	99	37 >
— — — — —	2-րդ — — — — —	99 > 37 >
— — — — —	3-րդ — — — — —	99 > 37 >
Ներքին 5% առաջին փոխառութ.	246	50 >
— — — — —	երկրորդ — — — — —	230 > 25 >
5 1/2% ռէնտա — — — — —	102	75 >
Ոսկեայ ռէնտա — — — — —	193	— >
Նօթերով կօնսոլիդաց. փոխառութիւն.	— — — — —	165 > 50 >
Նոր երկաթուղային ռէնտա — — — — —	98	75 >
5% գրաւական թղթեր կալուած.	— — — — —	163 > — >
փոխ. կրեդ. ընկ. — — — — —	98	87 >
Գրաւ. թղ. Ալեք. բանկի — — — — —	— — — — —	— > — >
5 1/2% գրաւական թղթեր խնայողի կալուած. բանկի. — — — — —	97	25 >
6% գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.	102	25 >
— — — — —	101	25 >
— — — — —	101	75 >
— — — — —	101	75 >
— — — — —	102	75 >
— — — — —	101	— >
— — — — —	101	50 >
— — — — —	101	— >
— — — — —	27 և 43 տ. — — — — —	— > — >
— — — — —	18 և 43 տ. — — — — —	— > — >
Վ. օլտիս-կամսկի բանկի ակցիաները	616	— >
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	280	— >
Իրիսկա-Վ. օլտիս-կամսկի ընկ. — — — — —	101	50 >
Ս. Պետերբուրգի քաղաքային օրվ. գացիաներ. — — — — —	95	37 >
Մոսկվայի քաղաք. օրվ. գացիաներ. — — — — —	95	87 >
Օդեսայի — — — — —	93	37 >
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրվ. — — — — —	—	— >
Պետական բանկի 6-դ հրատարակ. կուլեան տոմսերը — — — — —	—	— >
Ս. Պետերբուրգի բորսայի արամագրութիւնը փոխար. վերաբերմամբ ամուր է:	—	— >

ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐ

ՄՕՍԿՎԱ. Եղ. Ժամ. Ձեր յայտարարութիւնը սպվում է, բայց ոչ թէ առաջին երեսի վրա: Մենք անդադար յայտնում ենք մեր լրագրում, որ առաջին երեսի վրա ոչ մի կողմնակի յայտարարություն չենք տպում:

ԵԿԱՏԵՐԻՆՈՒՊՈԼ. Մ. Ն. Բառասուն բուրդի ստացանք ձեր ծանօթ պարտի ձեռքով:

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԴՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԿԱՆՎԱՅԻ ՎՐԱ ԿԱՐԵՆՈՒ ՀԱՄԱՐ

„ՀԱՅԿԱԿԱՆ ՆՁԱՆԱԳԻՐ“

Աշխատութիւն վԱՐԴԱՆ ԼԻՍԵՅԱՆԻ

Լոյս տեսաւ և ծախվում է Կենտրոնական գրավաճառանոցում, եղբ. Արովանների և Ժիրարդի խանութներում: Գինն է 20 կօպէկ Թիֆլիսում: Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն Հետեւեալ Հասցեով. Тифлисъ. Центральная книжная торговля

1—2

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES
PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖԻՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՅՈՒԹԱՆԸ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
(ՄԵՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵՅԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ Հինգշաբթի, 2/13 ապրիլի, ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգենաւ MENDOSA (ՄԵՆԴՕՅԱ) նաւապետ REGNIER (ՐԵՆԻԵ) դէպի Կ. Պօլիս և Զմիւռնիա և յաւակցելով Եաֆա, Պօրտ-Սայդ և Ալեքսանդրիա գնացող ընկերութեան շոգենաւերի հետ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ԲԱԹՈՒՄ և ԲԱԳՈՒ պ. պ. ԲՈՒՐ-ԿԱՐԴԻՆ և ԸՆԿ. Խակ Թիֆլիսում ԳԵՈՐԳ ՀԵՋՈՒԲԵԱՆ ՀԵՋՈՒԲԵԱՆՅԱՆ:

3—3

Լոյս տեսաւ Ս. Պետերբուրգում, Եւրոպական նոտաներով, „ԲՆԱՐԻԿ ՄԱՆԿԱԿԱՆ“ երգարանը, աշխատանքութիւն ՂԱԶԱՐՈՍ ԲԱԶԱՆԱՅ ԾՈՎ-ՍԵՓԵԱՆԻ, որը պարունակում է իր մէջ ընտիր երգեր, պարերգեր և աղօթքներ, որոնք յարմարեցրած են զաւանուրի վրա նուագելու: Խրաքանչիւր օրինակի գինն է ճանապարհածախսով 2 լուբլի: Վաճառվում է Թիֆլիսում պ. Յ. Սուր-զանաճանցի երաժշտական գրախանութում և միւս գրավաճառանոցներում: Նոյնպէս և աշխատանքովի մօտ: Հասցէն. — Թիֆլիս — Լաւրաբար, Ղազարոս քահանայ Ծովսէփեան:

3—10

Կօնստանտին Միխայլովիչ ԱԼԻՍԱՆՕՎ իր քղերով, սրտի ցաւօք յայտնելով իրանց հօր ՄԻԽԱՅԻԼ ԵԳՕՐՕՎԻՉ ԱԼԻՍԱՆՕՎԻ մահվան մասին, խնդրում է ազգականներին և ծանօթներին շնորհ բերել յուզարկաւորութեան հանդիսին, հինգշաբթի, Ապրիլի 2-ին, առաւօտեան 10 1/2 ժամին, իր սեփական տանից Սերգիեվսկայա փողոցում, դէպի Մոդնու Ս. Գէորգ եկեղեցին:

Հոգեհանդիսանել կատարվում են երեքշաբթի մարտի 31-ին և չորեքշաբթի ապրիլի 1-ին, երեկոյեան 7 ժամին:

1—2

ԲԱՆԿԱՅԻՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ
ԵՂԲԱՐՑ ԺԱՄՀԱՐԵԱՆՑ
Մ Օ Ս Կ Վ Ա Յ Ո Ւ Մ

Այն պարոններին, որոնք ցանկանում են ԱՊԱՀՈՎԵԼ առաջին և երկրորդ փոխառութեան ՏՕՄԱԿՆԵՐԸ մեր բանկում, խնդրում ենք ուղարկել ամեն հատի համար 60 կօպէկ, և 10 կօպ. անդորրագրի համար առանձին:

1—10

ВЫСОЧАЙШЕ Утвержденное Кавказское Товарищество торговли аптекарскими товарами в Тифлисе (Графская ул., противъ Музея).
ԲԱՊՐԱԳՈՅ ՀԱՍՏԱՏՎԱՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԳԵՂԱՍԱՆ ԱՊՐԱՆԲՆԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ (Գրաֆսկայա փողոց, Մուզէյի դիմաց):
Ձանազան գոյնի ԱՆՎՆԱՍ ՆԵՐԿԵՐ, ՋՈՒՆԵՐ ՆԵՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ, բացատրութիւնների հետ միասին:
Վանի, զաֆրան, հիւ, մշկանոտ ընկող և ծաղիկ, կիտրոնի և վարդի իւղ, նարնջային ջուր, վարդաջուր, և ուրիշ նիւթեր՝ ՋԱՏԿՈՒՄՑ ԽՈՐԵՂԵՆՆԵՐԻ և անպին անտեսութեան համար: Գեղատան ապրանքների վաճառման կովկասեան ընկերութեան մէջ ԹԻՖԼԻՍՈՒՄ, ՆԻ ԲԱԳՈՒՆ նրա բաժանմունքում:

38—100

ԷԼԻԿՍԻՐ ԱՏԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ (ELIXIR DENTIFRICE)
ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ ՀԱՅՐԵՐԻ
ՍՈՒԼԻԱԿԻ ԱՐԲԱՑՈՒԹԻՒՆՑ (GIRONDE)



Ատամների համար Բենեդիկտեան հայերից պատրաստած էլիկսիրի ամենօրեայ գործածութիւնը, մի քանի կաթիլներ ջրի մի կէս բաժակի մէջ, պահպանում է ատամները փշանալուց, սպիտակ է դարձնում և պնդացնում է ատամները, մաքրում է և պահպանում է ծնօրը:

ԳԻՆԸ դուրսը 2 և 8 ֆրանկ. Փօչին՝ արկղիկը 1 ֆրանկ 25 սանտ. Պատաս՝ արկղիկը 2 ֆրանկ:
Հիմնարկութիւնը գոյութիւն ունի 1804 թւից.
Գլխաւոր ագէնտ SEGUIN, Բօրթօ (Ֆրանսիա).
Թիֆլիսում ծախվում է պ. Բերդմոնի մագաղկանում և պարֆյումերների ուրիշ մագաղկաններում:

9—48 (Կ. շ.)

ԲՐՕԿԱՐ և ԸՆԿ.

Խնդրում ենք յարգելի հասարակութեանը առնելով
մեր ԳԼԻՑԵՐԻՆԵԱՆ ՍԱՊՕՆ
և մեր հնարած
ԾԱՂԱՎԱՀՈՑ Օ-ԴԵ-ԿՈԼՈՆ
զգուշանալ կեղծումներից և նմանողութիւններից

9—12 (Կ) C. M. 1678

ԲՐՕԿԱՐ և ԸՆԿ.

ԵՂԲԱՐՑ ԽՕՎԻԱՆՕՎՆԵՐԻ ԵՒ ԸՆԿ.
ԲԱՆԿԱՅԻՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ
(Սիօնի փողոց, քարվանսարայ Անանովի)

Վաճառում է և դնում է տոկոսաբեր թղթեր և փոխ է տալիս նոցա գրաւականով (ԽՕՎԱՏՈՄՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԻՆՁԵՒ 210 ՐՈՒԲԼԻ):
Փոխադրութիւնների է անում ՄՕՍԿՎԱ, ՕԴԵՍՍԱ, ԲԱԳՈՒ, ԲԱԹՈՒՄ և արտասահմանի զանազան քաղաքներ:

5—16 (Կ. շ.)

ՆՈՐ ԳԻՐԲ. (ՌՈՒՍԵՐԵՆ ԼԵՋՈՒՈՎ)

ՀՈՂԱՅԻՆ ՆԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԱՌՈՒՆԴԸ ՀԻՆ ՎՐԱՍԱՆՈՒՄ Ս. Բահաթրեանի. 1 զրջան Գինը 35 կ. Թիֆլիսի գրավաճառանոցներում: 10 աւելի առնողներին 20% շէջում կը լինի Կենտրոնական գրավաճառանոցում:

26—30